ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Ապրիլ 2003)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Ցնցային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Տնտեսական աճ: 2003 թ. հունվար-ապրիլին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 12.2%: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում արդյունաբերության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 4.4 տոկոսային կետ), ծառայությունների (3.5) և շինարարության (2.2) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2003 թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 103.5%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թ. ապրիլին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 2.0% աճ՝ հիմնականում «Միրգ», «Ձկնամթերք», «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Մսամթերք» և «Ձու» ապրանքախմբերի, համապատասխանաբար՝ 17.1%, 52.3%, 6.1%, 2.3% և 6.1%-ով աճի հաշվին:

2002 թ. դեկտեմբերի նկատմամբ գների ընդհանուր մակարդակի աճը կազմել է 4.2%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 3.63 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.02 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ 0.5 տոկոսային կետը:

2003 թ. հունվար-ապրիլին, 2002 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.2%, իսկ ապրիլին, 2002 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 102.7%:

Արտաքին հատված: 2003 թ. հունվար – ապրիլին ապրանքների արտահանումը կազմել է 179 մլն ԱՄՆ դոլար (FOB գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 14.9%-ով: Աճել են հիմնականում արտահանման մեջ շուրջ 54.9 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 10.8 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները համապատասխանաբար 13.9% և 69.9%: 4.7%-ով նվազել է արտահանման մեջ 9.6% կազմող «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ծավալը:

Ապրանքների ներմուծումը կազմել է 356.1 մլն ԱՄՆ դոլար (CIF գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 27.8%-ով: Ընդ որում, աճը հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ շուրջ 26.4 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 16.5% կազմող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 76.5% և 11.5% աճով: Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի, արտահանումն աճել է 16%-ով, իսկ ներմուծումը՝ 16.3%-ով:

Արդյունքում, 2003 թ. հունվար – ապրիլ ամիսներին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 44.2 %-ով (իսկ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ 16.4%-ով) և կազմել 177 մլն ԱՄՆ դոլար:

2003 թ. հունվար – ապրիլ ամիսներին ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 587.0 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 3%-ով: Ապրիլ ամսվա փոխարժեքը կազմել է 588.11 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 0.4%-ով:

Պետական բյուջե: ՀՀ պետական բյուջեի կատարման ցուցանիշներն ապրիլին շեղվել են պետական բյուջեի ցուցանիշների ամսվա համար ծրագրված մակարդակից: Այսպես, ամսվա արդյունքում բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 16.7 մլրդ դրամ՝ ծրագրված 19.8 մլրդ դրամի փոխարեն, որտեղ հարկային եկամուտները՝ 15.7 մլրդ դրամ՝ ծրագրված 17.5 մլրդ դրամի փոխարեն, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 1.0 մլրդ դրամ՝ ծրագրված 1.3 մլրդ դրամի փոխարեն: Չի ստացվել նաև նախատեսված մոտ 1.0 մլրդ դրամի դրամաշնորհը: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 796 մլն դրամ՝ մարտի 988 մլն դրամի և նախորդ տարվա ապրիլի 677 մլն դրամի դիմաց: Ապրիլին ևս հարկերի հավաքումն ընթացել է անհամաչափ. ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ցուցանիշի 31.1%-ը՝ ընթացիկ տարվա մարտի՝ 37.6%-ի, փետրվարի՝ 30%-ի և հունվարի 36.5%-ի դիմաց:

Վերը նշված շեղումների պայմաններում բյուջեի եկամուտների ծրագրված համամասնություններից ծախսերն ապրիլին կազմել են 18.8 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 21.9 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում, բյուջեի պակասուրդը կազմել է մոտ 2.1 մլրդ դրամ՝ շեղվելով ծրագրից 0.7 մլրդ դրամով: Այն ձևավորվել է ֆինանսավորման հետևյալ աղբյուրների՝ 0.3 մլրդ դրամ արժեթղթերի զուտ մարումների, 10.2 մլրդ դրամ արտաքին ֆինանսավորման, միասնական հաշվում 9.8 մլրդ դրամ կուտակման (ԿԲՎ-ի

[1] *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշների աղբյուրը ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թ. հունվարի-ապրիլին» պարբերականն է:*

հերթական մասնաբաժնի ստացման և այն միասնական հաշվում կուտակման արդյունքում) և 2.0 մլրդ դրամ ԿԲ-ում ներդրված ավանդների մարման հաշվին:

Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով վերը նշված արտաքին վարկի ստացման և չծախսման պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պահանջն ամսվա ընթացքում ավելացել է 10.2 մլրդ դրամով և կազմել ավելի քան 23.7 մլրդ դրամ:

Դրամավարկային քաղաքականություն: Ապրիլին ակնկալվող հիմնական ավտոնոմ ներհոսքը մարտից հետաձգված ԿԲՎ V-ի հերթական և Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ամսական մասնաբաժիններն էին՝ ավելի քան 15.3 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից 2.0 մլրդ դրամի հաշվին պետք է իրականացվեր արտաքին պարտքի սպասարկում: Միևնույն ժամանակ, ապրիլի սկզբին նախատեսվում էր պետբյուջե փոխանցել նախորդ տարվա արդյունքներով գոյացած ԿԲ շահույթի մնացորդը՝ մոտ 1.1 մլրդ դրամ: Ընդ որում, ըստ հարկաբյուջետային քաղաքականության ապրիլ ամսվա ծրագրված սցենարի, ԿԲՎ-ի ողջ գումարը խնայվելու էր՝ ճշգրտելու համար ծախսման ուղղությունները:

Նշենք, որ փաստացի արդյունքներով հոսքերը հիմնականում համընկել են սպասվածին, ինչի պարագայում ապրիլին փողի բազան աճել է 4.0 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 97.3 մլրդ դրամ՝ բավականին մոտ տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին: Ընդ որում, ամսվա ընթացքում փողի բազան կառավարվել է բացառապես տատանումների թույլատրելի միջակայքի սահմաններում և, ի տարբերություն նախորդ ամիսների վերջին օրերի նվազման, ապրիլի վերջին ավելացել է 2.0 մլրդ դրամով՝ պայմանավորված Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ստացմամբ:

ՀՀ ԿԲ ԶԱԱ-ն, ակնկալվող ֆինանսական ներհոսքի ստացման հաշվին, համալրվել են մոտ 13.7 մլրդ դրամով, որում հիմնական բաժինը կազմում են ԿԲՎ-ն՝ 12.1 մլրդ և Լինսի հիմնադրամի դրամաշնորհը՝ 2.9 մլրդ դրամ: Ամսվա ընթացքում սպասարկվել է նաև 1.9 մլրդ դրամի արտաքին պարտք:

Ի տարբերություն ԿԲ ԶԱԱ-ի, ԶՆԱ-ն նվազել են 9.7 մլրդ դրամով և ապրիլի վերջին ԿԲ ներքին պարտավորությունները գերազանցել են ներքին ակտիվները անհամեմատ մեծ տարբերությամբ՝ 32.7 մլրդ դրամով: ԶՆԱ-ի նվազման հիմնական գործոնը ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունների ցուցանիշի մեծածավալ նվազումն է՝ վերոնշյալ արտարժութային ներհոսքի ազդեցությամբ: Մասնավորապես, ԿԲՎ-ի գումարը Գանձապետարանի միասնական հաշվում խնայելու արդյունքում մնացորդն աճել է 9.8 մլրդ դրամով՝ հասնելով 20.1 մլրդ դրամի. ինչպես նաև ԿԲ արժեթղթերի պորտֆելից մարվել է 208 մլն դրամ:

ԿԲ ԶՆԱ-ի կառուցվածքում զուտ այլ ակտիվներն աճել են 355 մլն դրամով՝ հիմնականում ի հաշիվ 2002 թվականի ԿԲ շահույթի մնացորդի՝ պետբյուջե փոխանցման: Եղել է նաև ավելի քան 700 մլն դրամի այլ պարտավորությունների աճ, որը չեզոքացրել է զուտ այլ ակտիվների, հետևաբար նաև փողի բազայի վրա փոխանցված շահույթի աճի ուղղությամբ ազդեցությունը:

ԿԲ - բանկեր փոխհարաբերություններն ապրիլին բավականին պասիվ էին, քանի որ նախատեսված ավտոնոմ հոսքերը հիմնականում ապահովել են փողի առաջարկի տատանումները թույլատրելի միջակայքում և, ԿԲ գործիքների կիրառման անհրաժեշտություն չի զգացվել: Միակ հոսքը բանկերին Վերականգնման վարկերի բանկի (KfW) միջոցների հաշվին տրամադրված վարկն է, որի հետևանքով բանկերի պարտավորությունները ԿԲ հանդեպ աճել են 150 մլն դրամով:

Մեծ ծավալի շարժեր են դիտվել նաև փողի բազայի կառուցվածքային տարրերի վարքագծում: Այսպես, շուրջ 1.2 մլրդ դրամով նվազել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկը, որն ուղեկցվել է թղթակցային հաշվի միջոցների 5.2 մլրդ դրամի համալրմամբ: Վերջինիս նման մեծ մասշտաբները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ, նախ՝ ամիսը սկսվել էր թղթակցային հաշիվների բավականին ցածր՝ 14.9 մլրդ դրամ (պահուստավորման ենթակա գումարը՝ 14.1 մլրդ դրամ) մակարդակով և, մյուս կողմից՝ բյուջետային հարկերի մեջ՝ նախորդ ամիսների համեմատ թղթակցային հաշվի միջոցներից ապահովված մուտքերի տեսակարար կշիռը ապրիլին փոքր է եղել: Ընդ որում, թղթակցային հաշվի միջոցների աճի տեմպն ավելի բարձր է եղել երկրորդ կեսին, իսկ աճի միայն 2.0 մլրդ դրամը բաժին է ընկել վերջին օրվան՝ պայմանավորված Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ամսական գումարի հիմնական մասի ստացմամբ: Այս շարժերն անդրադարձել են առավելապես ավելցուկ պաշարների վարքագծի վրա, որը դրսևորել է աճի միտումներ՝ առաջին կեսի միջին օրական 1.6 մլրդ դրամից երկրորդ կեսին հասնելով 3.0 մլրդ դրամի: Այդուհանդերձ, ավելցուկ իրացվելիության միջին ամսական մակարդակը, նախորդ ամիսների համեմատ, նվազել է՝ կազմելով 2.3 մլրդ դրամ (մարտի՝ 2.9 մլրդ և փետրվարի՝ 3.9 մլրդ դրամի դիմաց):

Ապրիլը, որպես տնտեսական աշխուժացման ժամանակակաշրջանի սկիզբ, աչքի է ընկել նաև փողի պահանջարկի աճով, ինչն առավել արագ տեմպեր է ունեցել փողի զանգվածի[2] (առանց կուտակված տոկոսների) և հատկապես դրա արտարժութային բաղադրատարրի գծով: Փողի զանգվածն աճելով 6.8 մլրդ դրամով կազմել է 189.5 մլրդ դրամ, այդ թվում՝ 4.7 մլրդ դրամը բաժին է ընկել արտարժութային, իսկ 2.9 մլրդ դրամը՝ դրամով ցպահանջ ավանդներին: Բանկային համակարգից դուրս շրջանառվող կանխիկի

[2] *Դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկում ներառված են 22 բանկերի (մեկը բացվել է մարտի սկզբին) տվյալներ:*

գծով դիտվել է 911 մլն դրամի նվազում, որի պարագայում դրամային զանգվածի աճը (մոտ 2.1 մլրդ դրամ) պայմանավորվել է առավելապես դրամային ցպահանջ ավանդների շարժերով:

Արդեն երկրորդ ամիսն է, որ ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչները պահպանում են կայուն վարքագիծ՝ կազմելով համապատասխանաբար 1.95 և 1.1 մակարդակ:

Ֆինանսական շուկայում, բացառությամբ պետարժեթղթերի առաջնային շուկայի, պահպանվել են տոկոսադույքների նվազման միտումները: Այսպես, ՊՊ առաջնային շուկայում տեղաբաշխվել են հիմնականում 9-12-ամսյա պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը նախորդ ամսվա 13.5 %-ից հասել է 14.4%-ի: Բարձր եկամտաբերություն է ձևավորվել նաև միջինժամկետ ՊՊ շուկայում՝ 17.6 տոկոս (1.5 տարի մարման ժամկետով), այն դեպքում, երբ մարտին 2 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերը տեղաբաշխվել էին 16.1%-ով: Այնուհանդերձ, երկրորդային շուկայում դիտվել է տոկոսադրույքների նվազում, մասնավորապես՝ պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 1.1, իսկ ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքները՝ 0.6 տոկոսային կետով:

Ելնելով շուկայական տոկոսադրույքների վերոնշյալ կայուն միտումներից՝ ԿԲ խորհուրդը անփոփոխ է թողել նաև ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար – մարտ*	*2003 թ. հունվար – մարտի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*Հունվար - ապրիլ*	*2003 թ. հունվար – ապրիլի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	189882.4	111.4	266164.9	112.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	103.9	-	103.5	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [1]	148.8[3]	112.4[3]	208.5	113.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	90700.3	110.6	123052.6	113.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1626.5	101.6	2008.1	101.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	33515.3	106.7	45061.8	104.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	124179.4	110.7	173601.8	111.2
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	13914.9	133.2	22964.4	140.9
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	196373.4	103.5[1]	279136.4	106.3[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	210497.1	107.8[1]	293709.5	109.4[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	28403.0	112.2[1]	28742.0	113.4[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1403.6	-	1403.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.6	-	127.5	-
Գործազրկության մակարդակը (%)	9.1	-	9.1	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար – մարտ*	*2003 թ. հունվար – մարտը 2002 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*Հունվար-ապրիլ*	*2003 թ. հունվար-ապրիլը 2002 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	132.8	110.6	179.0	114.9
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	256.8	125.6	356.1	127.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	123.9	146.9	177.0	144.2

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
Ապրիլ	102.0	102.5	100.0	98.3
2003 թ. հունվար – ապրիլը 2002 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	103.2	104.2	100.8	105.8

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5	2.0	4.2
Մայիս	1.6	1.7		
Հունիս	-1.3	-0.5		
Հուլիս	-2.7	-5.0		
Օգոստոս	-0.7	-3.0		
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

V. Սպառողական գների փոփոխությունները

	Բնականոն սղաճ		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ[2]*
Ցուցանիշներ	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ[1] (%)						
Հունվար	0.5	0.4	35.5	3.69	0.1	0.01	4.1
Փետրվար	-0.4	-0.3	27.0	2.81	0.1	0.01	2.5
Մարտ	-0.5	-0.4	23.6	2.45	0.1	0.01	2.1
Ապրիլ	0.6	0.5	34.9	3.63	0.2	0.02	4.2


[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք բաղադրիչների գումարը պետք է հավասար լինի սղաճի ներկայացված (վերջին սյունակ) ցուցանիշին:
[3] Նշված ցուցանիշը տարբերվում է 2003 թ. մարտի «ՀՀ ԿԲ տեղեկագրում» հրապարակված նույն ցուցանիշից, որը տեխնիկական վրիպակ է:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պարտատոմսեր	Կենտրոնական բանկի միջնաժամկետ պարտատոմսեր	Կենտր. տրժեթղթերի գծով տոկոսային ապառիկներ	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ ներմուծ. իսկ/փրկատոմս	ՀՀ տոհգտ. պետ. ոչ ֆինանսական կամ հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	-9711	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	-12931	-12921
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	-10362	-10366
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	-13564	-13617
Ապրիլ	0	1536	0	1536	25125	151	13	0	0	25288	-23752	-23758


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2002			
Դեկտեմբեր	13509	13148	26657
2003			
Հունվար	13953	14828	28781
Փետրվար	16032	12153	28185
Մարտ	16032	12961	28993
Ապրիլ	14720	25288	40009



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***123657***	***124388***	***123570***	***116338***	***130021***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-12384***	***-24298***	***-25787***	***-23007***	***-32691***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500	7650
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0	0
Զուտ այլ ակտիվներ	-13065	-21009	-20406	-16943	-16589
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***	***97003***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***	***97330***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965	76782
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920	20079
Այլ հաշիվներ	356	375	411	446	469
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***21122***	***731***	***-818***	***-7232***	***13683***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***274***	***-11914***	***-1489***	***2780***	***-9684***
Կառավարություն	-1816	-3220	2569	-3202	-10188
Կենտրոնական կառավարություն	-1816	-3220	2569	-3202	-10188
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	58	-58	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0	0
Բանկեր	296	-750	-4661	2519	150
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	750	1610	-2360	0
Զուտ այլ ակտիվներ	1794	-7944	603	3463	354
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***15896***	***-7141***	***-2371***	***-3933***	***2133***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***21396***	***-11183***	***-2307***	***-4452***	***3999***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	17973	-14332	817	-608	-1183
Պարտադիր պահուստ. (դրամով)	3359	3130	-3160	-3879	5159
Այլ հաշիվներ	64	19	36	35	23
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***20.6***	***0.6***	***-0.7***	***-5.9***	***11.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2.2***	***96.2***	***6.1***	***-10.8***	***42.1***
Կառավարություն	23.0	33.2	-19.9	30.9	75.1
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	1	-100.0	0.0
Բանկեր	2.9	7.2	-48.3	50.6	2.0
Զուտ այլ ակտիվներ	-12.1	60.8	-2.9	-17.0	-2.1
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***17.2***	***-6.6***	***-2.3***	***-4.0***	***2.2***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***23.8***	***-10.1***	***-2.3***	***-4.6***	***4.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	24.3	-15.6	1.1	-0.8	-1.5
Պարտադիր պահուստ. (դրամով)	21.7	16.6	-14.4	-20.6	34.6
Այլ հաշիվներ	21.9	5.3	9.6	8.5	5.2

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի=349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**	**23970**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790	78023
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028	-51467
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095	-2586
ԶՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**	**91841**
Կառավարություն	10569	10626	9140	11246	11855
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943	11580
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895	26301
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951	-14720
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719	88957
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57655	56514	55822
Դրամով	19543	14356	14949	15137	14357
Արտարժույթով	43675	43211	39497	38365	38896
Արժեթղթեր	4130	3495	3201	3013	2569
Տնային տնտեսություններ	30775	23523	24377	26083	27899
Դրամով	7533	4261	4289	4495	4655
Արտարժույթով	24641	19262	20088	21589	23244
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75	89
Դրամով	64	64	64	62	67
Արտարժույթով	0	7	13	13	22
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943	5043
Դրամով	-	3286	3077	3378	3744
Արտարժույթով	-	1621	1393	1565	1299
Զուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483	-20551
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946	861
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571	1237	3043
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496	-229	-160
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224	455
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124	3561
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767	30178
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747	-3353
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479	-741
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258	-45427
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068	-8968
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**	**115811**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321	34269
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158	11239
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773	81542
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126	37444
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231	43670
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415	429

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***	***153991***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***	***36181***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317	-12172
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739	88974
Ձեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618	55926
որից՝ կուտակված տոկոսներ	1041	915	908	961	930
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103	27916
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525	489
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75	89
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [6]	0	4907	4469	4943	5043
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62	84
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085	-40621
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [7]	***123897***	***107407***	***107600***	***106323***	***108378***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***	***189493***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [8]	***203138***	***185202***	***185434***	***183342***	***190172***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801	73890
Ցպահանջ ավանդներ [9]	26036	21954	22351	20608	23499
կուտակված տոկոսներ	144	21	28	26	31
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.	88546	88267	87560	87932	92782
կուտակված տոկոսներ	406	579	618	633	648
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	79038	77572	77582	76774	81543
Ցպահանջ	36854	34178	34593	33126	37445
Ժամկետային	41836	43014	42594	43231	43670
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415	429
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***	***12986***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***	***-6156***
Կառավարություն		-3268	1083	-1095	-9855
Տնտեսություն		-4432	-2988	1143	1235
Ձեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037	-692
որից՝ կուտակված տոկոսներ		-126	-7	53	-31
Տնային տնտեսություններ		-2699	852	1708	1813
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13	-36
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2	14
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474	100
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5	22
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798	2464
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ		***-16490***	***193***	***-1277***	***2055***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***	***6810***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ		***-17936***	***232***	***-2092***	***6830***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722	-911
Ցպահանջ ավանդներ		-4082	397	-1743	2891
կուտակված տոկոսներ		-123	7	-2	5
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372	4850
կուտակված տոկոսներ		173	39	15	15
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808	4769
Ցպահանջ		-2676	415	-1467	4319
Ժամկետային		1178	-420	637	439
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ		31	16	21	14

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-6.1***	***3.0***	***-2.0***	***9.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-16.2***	***-8.7***	***2.0***	***-14.5***
Կառավարություն		-339.4	-47.0	89.6	425.3
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3	1.4
Չեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8	-1.2
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0	6.9
Հասարակական կազմակերպություններ		-	-	-	-
Այլ ֆինանսական կազմակերպություններ		-	-	-	-
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8	-5.7
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [7]		-13.3	0.2	-1.2	1.9
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		-8.9	0.1	-1.1	3.7
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [8]		-8.8	0.1	-1.1	3.7
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0	-1.2
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8	14.0
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4	5.5
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0	6.2
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2	13.0
Ժամկետային		2.8	-1.0	1.5	1.0

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] ԶԱՒ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՒ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱՒ-ն փաստացի փոխարժեքով:

[3] ԿԲ-ի ԶԱՒ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[4] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ծյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[5] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[6] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Չեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[7] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[8] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[9] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2002	88556	25892	114448	9449	123897	78691	202588
2003							
Հունվար	74980	21933	96914	10494	107408	77194	184602
Փետրվար	75523	22323	97846	9754	107600	77188	184788
Մարտ	74801	20582	95383	10940	106323	76359	182682
Ապրիլ	73890	23468	97358	11020	108378	81114	189492


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[4] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[5] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն դրամ
114500
111000
107500
104000
100500
97000
93500
90000
07.01.03
10.01.03
15.01.03
20.01.03
23.01.03
27.01.03
31.01.03
05.02.03
10.02.03
13.02.03
16.02.03
20.02.03
24.02.03
27.02.03
04.03.03
10.03.03
13.03.03
18.03.03
21.03.03
26.03.03
29.03.03
01.04.03
04.04.03
09.04.03
14.04.03
17.04.03
22.04.03
26.04.03
30.04.03
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
15000
0
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա
99 00
01
02
03
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
300000
250000
200000
150000
100000
50000
0
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա
99 00
01
02
03
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2002	2003			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
Կենտրոնական բանկի ՁԱԱ	130616	124388	123570	116338	130021
Առևտրային բանկերի ՁԱԱ	18286	15367	20373	24667	23970
Ընդամենը	148902	139755	143943	141005	153991
Կենտրոնական բանկի ՁԱԱ[3]	***131168***	***125064***	***124292***	***117131***	***130751***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2002					
Դեկտեմբեր	97719	75215	100680	110572	195459
2003					
Հունվար	102694	76168	98593	109625	189066
Փետրվար	102953	80596	105414	114727	196179
Մարտ	98095	79126	102533	113021	191929
Ապրիլ	101673	78730	103652	114413	202246


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001 [3]	2002 [4]	2003			
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	431.3	420.0	417.8	403.6	440.0
Համախառն միջազգային պահուստներ	333.2	441.7	430.4	428.2	413.2	448.9
Ոսկի	12.4	15.7	16.3	15.9	14.9	14.9
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	30.1	26.2	26.1	26.0	23.6
Արտարժույթ [2]	310.6	395.9	387.8	386.3	372.2	410.4
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [5]	***331.2***	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***	***441.7***


[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[5] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003			
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա
Վարկեր [1]						
Իրավաբանական անձանց						
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7	17.5
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2	22.7
Ֆիզիկական անձանց						
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2	25.3
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9	34.6
Ավանդներ [1]						
Իրավաբանական անձանցից						
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9	8.0
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7	3.0
Ֆիզիկական անձանցից						
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8	8.2
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0	6.0
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0	10.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0	5.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5	14.7
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5	2.0

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ-03	Մ-03	Ա-03
1	-	-	-	-	589.02
2	585.81	-	-	-	588.56
3	585.81	-	585.46	588.85	588.56
4	586.51	-	584.65	588.99	588.43
5	586.51	-	585.52	-	-
6	586.15	-	584.70	588.99	-
7	-	585.10	586.00	588.85	588.21
8	-	586.63	-	-	588.00
9	586.44	579.03	-	-	588.89
10	586.79	582.48	586.41	589.25	589.03
11	586.92	-	586.10	589.88	588.88
12	586.92	-	585.89	590.23	-
13	586.35	582.48	586.23	590.93	-
14	-	582.48	585.81	591.53	588.69
15	-	582.17	585.81	591.53	588.11
16	585.51	581.00	585.81	591.53	588.31
17	585.15	582.00	585.96	591.76	588.23
18	584.88	-	585.96	591.76	588.01
19	584.00	-	-	591.76	-
20	582.52	582.00	586.21	591.61	-
21	582.52	582.00	586.56	591.51	587.54
22	-	582.00	586.56	-	587.67
23	582.16	582.25	-	-	587.67
24	582.16	584.00	587.36	591.22	-
25	582.22	584.00	587.70	590.64	587.54
26	582.00	-	587.81	590.55	587.54
27	582.20	584.23	588.12	590.23	-
28	582.20	-	588.46	589.52	587.37
29	583.65	584.44	-	589.52	587.15
30	584.89	584.64	-	589.52	587.01
31	-	584.73	-	589.52	-
ժամանակահատվածի վերջ	584.89	584.73	588.46	589.52	587.01
ժամանակահատվածի միջին	584.59	583.03	586.32	590.40	588.11





ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

ժամկետ		1-3 ամիս[2] (ներառյալ 91-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2003	Ապրիլ	-	-	-	-	-	-

ժամկետ		3-6 ամիս[2] (ներառյալ 182-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	500.0	14.7	14.7	14.7	0.0	19.3
	Ապրիլ	700.0	13.6	13.6	13.6	0.0	10.0
2003	Ապրիլ	-	-	-	-	-	-

ժամկետ		6-9 ամիս[2] (ներառյալ 273-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	700.0	14.5	14.5	14.5	0.0	18.1
	Փետրվար	800.0	13.9	13.9	13.9	0.0	17.4
